

Այն պատճառով, որ Նրան ամենագոր են անվանում, որովհետև կարող է անել այն ամենն, ինչ ցանկանում է, ամենն ինչ էլ չի նշանակում, որ Նա կարող է տուժել ինքն իրենից, որովհետև եթե դա պատահեր, Նա ոչ մի դեպքում ամենագոր չէր լինի: Ուստի Նա չի կարող անել որոշ բաներ հենց այն պատճառով, որ ամենագոր է:

Ավգուստինոս Երանելի<sup>1</sup>

## 2015 ԹՎԱԿԱՆԸ ՇՐՋԱՆՑԵԼՈՒ ՓՈՐՉԵՐ

Արդեն մեկ տարի է անցել «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ նախագահի 2011 թ. ապրիլի 23-ի հրամանագրից և 2011 թ. մայիսի 30-ին կայացած առաջին նիստից, սակայն Մեծ եղեռնի 100 ամյակը նրա հետևանքների հաղթահարման իրավաքաղաքական գործընթացի սկիզբը դարձնելու առաջարկները մինչ օրս շարունակում են մնալ իբրև «ձայն բարբառոյ յանապատի»:

Մինչև 2015-ը նախատեսվող ծրագրերի վերաբերյալ հանձնաժողովի անմիջական պատասխանատուների վերջին հայտարարությունների և հարցազրույցների բովանդակությունը հիմնականում սահմանափակվում է պատմագիտական պրպտումների շարունակման, ցուցահանդեսների կազմակերպման գիտաքարոզչական առաջադրանքներով, որոնք շրջանցում են ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը<sup>2</sup>: Ուստի հիմնագուրկ չէ այն մտահոգությունը, որ նիստերի շուրջ մեկամյա դադարի մեջ գտնվող այս հանձնաժողովի պատասխանատուների որդեգրած «ակադեմիական կեցվածքների» հետևախորքում թաքնված է 2015-ին ընդառաջ ցեղասպան թուրքիայի դեմ իրավաքաղաքական գործընթաց սկսելու առաջարկները կասեցնելու միտումը:

Ի վերջո, Հայոց ցեղասպանության պատմության շուրջ գիտական պրպտումները կարելի է իրականացնել և՛ մինչև 2015-ը, և՛ դրանից հետո, բայց եթե Մեծ եղեռնի 100-րդ տարելիցը Հայաստանի ու հայության համար չդառնա նրա հետևանքների հաղթահարմանն ուղղված **համակարգված իրավաքաղաքական նախաձեռնությունների** մեկնակետ, միջազգային հանրությունը այս իրադար-

\* Ընդունվել է տպագրության 10.06.2012:

1 City of God. Book 5, Chapter 10.

2 Հայոց ցեղասպանության հետևանքների գնահատման առումով մեզանում լայնորեն կիրառվող «հաղթահարում» հասկացությունից զատ, որոշ փորձագետների կողմից երբեմն օգտագործվում է նաև «վերացում» եզրույթը, որը, մեր կարծիքով՝ հիմնավորված չէ, քանի որ Հայոց ցեղասպանության հետևանքների մի մասը և առաջին հերթին՝ մարդկային կորուստները, անդառնալի են: Խմբ.:

Գ. (Ժ) Գրպի, թիվ 2 (38) ապրիլ-հունիս, 2012

ՎԵՄ համահայկական հանդես

ծուրթունքը ևս աստիճանաբար կարող է ներառել սոսկ «ակադեմիական ուշադրության» արժանի հիմնահարցերի շարքը, քանի որ՝

ա) եթե 1918-1920 թվականներին Հայաստանը՝ որպես անկախ պետություն, հետապնդել է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման առաջադրանքը՝ ընդհուպ մինչև իր անկախության կորուստը, իսկ նրա 70-ամյա «խորհրդային լուծությունը» եղել է քաղաքական պարտադրանքի հետևանք, ապա 1991-ին միջազգային քաղաքականության բեմահարթակ վերադարձած Հայաստանի երրորդ Հանրապետությունը նախքան 2015 թվականը բավարար ժամանակ է ունեցել և այսօր էլ դեռ ունի՝ այս հիմնահարցի վերաբերյալ սեփական պարկերացումները բանաձևելու և դրանք միջազգային հանրության սեփականությունը դարձնելու համար,

բ) անկախ առաջիկա տարիների միջազգային-քաղաքական կոնյունկտուրայից, Թուրքիան՝ որպես մարդկության դեմ հանցագործություն կատարած պետություն, երբեք չի բարելավի Հայաստանի հետ իր հարաբերությունները՝ չստանալով Հայոց ցեղասպանության փաստի պարմանականացման, այսինքն՝ այն պարմանքների հանձնաժողով տեղափոխելու և իրավաքաղաքական բովանդակությունից զրկելու երաշխիքներ, որոնց տեսանկյունից մնացած բոլոր հիմնախնդիրները, նույնիսկ Ղարաբաղի հարցը, թուրքական պետության համար եղել են ու կմնան որպես օժանդակ միջոցներ:

Ուրեմն՝ անկախ նրանից, թե 2015-ին Հայաստանի Հանրապետությունը կբացահայտի՞ արդյոք Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման միջազգային-իրավական գործընթաց սկսելու համայն հայության և Հայոց պետականության մտադրությունները, Թուրքիան Հայաստանի հանդեպ կիրառվող պարտվողական բացախտության պարտադրանքը կշարունակի դիտարկել իբրև երկկողմ հարաբերությունների բարելավման հիմնական պայման: Այսպիսով՝ որևէ «մարտավարական առաջնահերթություն», որևէ «իմաստուն փաստարկ» այսուհետ չի կարող հերքել Մեծ եղեռնի հետևանքների հաղթահարման քաղաքական հիմնանպատակի հստակեցման այժմեականությունն ու հրատապությունը: Հակառակ տեսակետի գերակայության պարագայում մինչև 2015 թվականը և դրանից հետո գործ կունենանք սոսկ մեր արդարացի ու միաժամանակ՝ ավելի քան ակնհայտ պահանջների ջայլամային քողարկման հետ:

Հարց է առաջանում՝ մի՞թե այս ամենը չի գիտակցում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող հանձնաժողովի անմիջական պատասխանատուներին ցուցմունքներ տվող Հայաստանի ղեկավարությունը: Անշուշտ, գիտակցում է, բայց թերևս հենց դա է նրան մղում 100-ամյակի միջոցառումները սոսկ հորելյանական գիտաժողովների և ցուցահանդեսների վերածելու գործելակերպին: Այդօրինակ քայլերը Հայաստանի իշխանություններին հնարավորություն են տալիս նրբորեն քողարկել Մեծ եղեռնի հետևանքների հաղթահարման հիմնանպատակին իրավաքաղաքական տեսք տալուց խուսափելու իրենց մտադրությունը, ինչը պայմանավորված է հիմնականում՝ երեք պատճառներով.

**առաջին**՝ իր պարմության երրորդ փասնամյակը բոլորած Հայաստանի երրորդ Հանրապետության քաղաքական ու տնտեսական ընդհանու հետևողական դեգրադացումը փաստորեն նրան վերածել է փողաբերի փակ կաստայի, որն առաջնորդվելով իշխանության, որ նույնն է թե՛ հարստության պահպանման գերխնդրով, ազգային հիմնահարցերի առկայությունն օգրագործում է սոսկ որպես երկրում շեւ-

վորված **փողապեղուքյան**<sup>3</sup> պահպանման միջոցներ,

**երկրորդ**՝ սեփական հայրենիքում բնակվող հայության զգալի մասի օտարումը պեղուքյունից և ընտանիքի ասպագան օտար երկրներում փնտրելու կործանարար մտահանգումի վերածումը մի կողմ «ազգային գաղափարի», ինչը հերևողականորեն խարխլում է ոչ միայն Հայոց պահանջարկության, այլև Հայաստանի Հանրապետության գոյության հիմքերը,

**երրորդ**՝ Հայաստանում տիրող անմիփար իրավիճակին քաջատեղյակ հայկական Սփյուռքի ասփիճանական խորթացումը Մայր Հայրենիքից, մասամբ նաև՝ հարվածական գաղափարների վրա խարսխվող **փակուղային գործելակերպի** արմատավորումը նրա ներսում:

Այսպիսով, սկնհայտ է, որ ժամանակին սկսելով հայ-թուրքական չարաբաստիկ արձանագրությունները որդեգրելու փակուղային գործնթացը, Հայաստանի իշխանությունները անցած տարիների ընթացքում չեն դավաճանել **իրենց էությանը**:

**Իրենց էությանը** չեն դավաճանել նաև Թուրքիայի իշխանությունները, որոնք այսօր ամեն ինչ անում են մինչև 2015-ը «երկխոսության» կեղծ նմանակումների բեմականացման ճանապարհով Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը կասեցնելու համար: Դրա վկայությունն են ԱՄՆ-ի հայ համայնքի հետ «անկեղծ խոսակցություն ծավալելու»՝ Թուրքիայի նախագահի և արտգործնախարարի խորամանկ փորձերը: Այս ամենի հեռահար նպատակը հայության առանձին խմբերի պահանջների մասնակի բավարարման միջոցով «կարգավորման» սեփական սցենարը պարտադրելն է: Ուրեմն՝ եթե անգամ Հայաստանն ու հայությունը մինչև 2015 թվականը ոչինչ չձեռնարկեն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավաքաղաքական գործընթաց սկսելու համար, միևնույն է, Թուրքիան ինքը, առանձին եկեղեցիների կամ կալվածքների վերադարձի և այլ «ընտրողական քայլերի» միջոցով փորձելու է առևտրայնացնելով՝ արժեգրելել հայերի օրինական ու արդարացի պահանջների իրավաքաղաքական բովանդակությունը:

Ուստի ՀՀ իշխանությունների ներկա կրավորական կեցվածքի պահպանման դեպքում մինչև 2015 թվականը մենք անխուսափելիորեն ներքաշվելու ենք Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման զանազան կեղծ սցենարների մեջ: Որովհետև, երբ Հայաստանն ու Սփյուռքը իրենք իրենց համար չեն հստակեցնում Մեծ եղեռնի հետևանքների հաղթահարման հիմնանպատակի իրավաքաղաքական բովանդակությունը, նրանց փոխարեն դա անում են ուրիշները՝ առաջնորդվելով օտար կամ թշնամական օրակարգերով:

Նման վտանգի առկայության պայմաններում վերջին տարիներին փորձագիտական մակարդակով մեզանում լրջորեն քննարկվում է մինչև 2015 թվականը Թուրքիային ուղղված հայկական պահանջների որոշակի **փաթեթ** և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման **հայեցակարգ** մշակելու և դրանցով առաջնորդվելու՝ երկմիասնական առաջադրանքը: **Առաջինն** անհրաժեշտ է,

3 Այս եզրույթը, որն առաջին անգամ օգտագործվել էր 2009 թ. հոկտեմբերի 10-ի հայ-թուրքական արձանագրությունների ստորագրման ներքաղաքական շարժառիթների բացահայտման նպատակով իրապարակված մեր խմբագրականում («Վեմ», 2009, N 3, էջ 3-10), անցած տարիների ընթացքում պատշաճ ըմբռնման չէր արժանացել: Բայց 2012 թ. մայիսի 6-ի խորհրդարանական «ընտրություններից» հետո, երբ մեր աչքերի առջև «զնվեց» Հայաստանի քաղաքացիների զգալի մասը, անգամ այն փորձագետները, որոնք մինչ այդ լուրջ վերապահումներ ունեին, իրենք ևս սկսեցին օգտագործել այս բանալի-բառը: Խմբ.:

որպեսզի ճշգրտվեն մեր կորուստների չափերը, կասեցվեն առանձին խմբերի ու անհատների «ինքնագործունեությունն» օգտագործելու Թուրքիայի փորձերը և առանձնացվեն Հայոց պահանջատիրության այն սուբյեկտները, որոնք կարող են ներկայացնել Հայաստանի ու հայության շահերը: **Երկրորդն** անհրաժեշտ է՝ հստակեցնելու համար այն մարտավարությունը, որը հարկ է լինելու կիրառել մինչև 2015 թվականը Հայոց ցեղասպանության ճանաչման ու նրա հետևանքների հաղթահարման առաջադրանքի համատեքստում: Այս երկու անհրաժեշտությունների շուրջ հայ գիտատեսական միտքն արդեն բավականին մեծ ծավալի աշխատանք է կատարել՝ զգալիորեն առաջ անցնելով անորոշության մեջ տարուբերվող ազգային քաղաքականությունից<sup>4</sup>:

Մեր փորձագետների ձեռքի տակ եղած հիմնավորումների, փաստարկների ու հաշվարկների բազմաթիվ տարբերակները վկայում են, որ դրանք գտնվում են հասունացման այն հանգրվանում, երբ արդեն զգում են իրենց դրույթները որդեգրող և գործնական քաղաքականության մեջ տեղափոխող կոնկրետ սուբյեկտների կարիքը: Ուստի երբ այսօր, «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով ստեղծելու մասին» որոշման ընդունումից և նրա առջև սովորական, տարելիցային բնույթի խնդիրներ դնելուց զատ, պետական մակարդակով «2015-ին ընդառաջ» մեզանում փաստորեն ոչինչ չի արվում, կրկին ուրվագծվում է սովորական մմանակումների ու թատերականացումների այն ծանոթ սցենարը, ինչը բնորոշ է Հայաստանի իշխող վերնախավի գործունեության փաստորեն բոլոր ոլորտներին:

Այսինքն՝ սրանով մեզ առաջարկվում է մի կողմ դնել Թուրքիային ներկայացվելիք իրավաքաղաքական փաթեթի ստեղծման համար անհրաժեշտ՝ հիմնավորումների նախապատրաստումը, քննարկումն ու որդեգրումը և զբաղվել այնպիսի ձեռնարկներով, որոնք մեր հակառակորդները վաղուց արդեն բնորոշել են հայ ժողովրդի համար խիստ վիրավորական՝ «մագոխիզմ» բառով: Նման գործելակերպը լիովին տեղավորվում է Արևմուտքում պարբերաբար «լեգիտիմություն» մուրացող, իսկ երկրի ներսում փող բաժանելով ինքնավերարտադրվող իշխանության պատկերացումների շրջագծում: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում Հայաստանի արտաքին պարտքը աստղաբաշխական թվերի հասցրած, կախյալ և ոչ լեգիտիմ իշխանությունը չի կարող օրինականություն պահանջել երկրից դուրս, ուստի 2015-ին ընդառաջ՝ զգայացուց, բայց դատարկ ձեռնարկների կազմակերպման միջոցով պատրաստվում է «փափուկ բարձ» դնել մեր հասարակայնության գլխի տակ:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ հայ ժողովրդի համար ճակատագրական՝ 2015 թվականին ընդառաջ.

ա) **միջազգային հանրությունը** շարունակաբար խոսում է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավման «վարդագույն հեռանկարների» մասին՝ անտեսելով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը,

բ) **ցեղասպան Թուրքիան** փորձում է միջազգային հանրությանը ցույց տալ, թե իբր՝ «երկխոսություն» է սկսում իր հանդեպ առավել հետևողական Սփյուռքի հա-

<sup>4</sup> Տե՛ս **Արա Պապյան**, Գայրենատիրություն: Գայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր, հոդվածների ժողովածու, Եր., «Ասողիկ», 2012: Տե՛ս նաև՝ «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող Արմեն Յ.Սարուբյանի «Գայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը» ամփոփիչ ուսումնասիրությունը:

յության առանձին հատվածների հետ,

գ) պիղատոսների երկերեսանության ու ցեղասպանի լկտիության երկկողմանի աքցանի մեջ հայտնված **Հայաստանի իշխանությունները**, տեղի տալով առաջինների «փողաբույր կամքին», փորձում են հիշատակի ու սգո արարողությունների կազմակերպման միջոցով շրջանցել միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանությանը քաղաքական և իրավական գնահատական տալու հասունացած առաջադրանքը:

Ուրեմն՝ «2015-ի» իրավաքաղաքական բովանդակությունը շրջանցելու հարցում, գոնե ներկա պահին, այս երեք սուբյեկտների միջև առկա է հստակ կոնսենսուս, ինչն անվիճելի իրողություն է: Սակայն 2015-ին ընդառաջ՝ կողմերի «հնարավոր դերաբաշխումների» մասին դեռևս խիստ վաղ է խոսել, որովհետև ինչպես գլոբալ ու տարածաշրջանային, այնպես էլ դրանցից բխող՝ ներազգային ու ներպետական գործընթացների ընդհանուր ուղղվածությունն առաջիկա երեք տարիներից մեզ բոլորովին այլ հեռանկարներ է խոստանում:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների բարելավմանը զոհաբերելու **արձանագրային ցանկությունը** ներկայումս անլուծելի հակասության մեջ է հայտնվել գլոբալ և տարածաշրջանային մակարդակների վրա հստակորեն ուրվագծվող այն վտանգավոր զարգացումների հետ, որոնք ծավալվում են Հայաստանի անմիջական հարևանությամբ՝ Արևմուտք-Արևելք դիմակայության առավել սուր կետերում:

Միրիայի ու Իրանի շուրջ սպասվող իրադարձությունների նախօրեին Հարավային Կովկասում Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի դեմ ձեռնարկվող ադրբեջանա-թուրքական շանտաժը ցույց է տալիս, որ մեր հակառակորդները Ղարաբաղում ևս հայերի հետ հաշվեհարդար տեսնելու առաջադրանքը համարում են Հայկական հարցը փակելու վճռորոշ պայման: Ու քանի որ հենց Ղարաբաղի միջոցով է Հայաստանի Հանրապետությունը շաղկապված ուժի այն կենտրոններին, որոնց ներկայությունից ազատվելու համար են ծավալվում մեր շուրջն ընթացող գործընթացները, սպա տարածաշրջանային ուժերի ընդհանուր հաշվեկշռի փոփոխությունը կարող է խարխուլել այն խաբուսիկ ստատուս-քվոն, որը դարձել է Հայաստանի իշխանությունների պատրանքային սպասումների ենթահողը: Մինչդեռ, տեկտոնիկ ճեղքվածքների վրա հայտնված երկրի համար որքան անհրաժեշտ ու պարտադիր է ուժի տարբեր կենտրոնների հետ ծավալվող միաժամանակյա խաղը, նույնքան էլ հակացուցված է «մեկը գիջելու, մյուսը շահելու» հատվածական հաշվարկը:

Ավելին՝ ներկայումս Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդրի մեջ պարփակվող Հայկական հարցն այն հզոր քաղաքական գործոններից մեկն է, որը միջազգային ասպարեզում ծառայում է իբրև լրջագույն խոչընդոտ Լեռնային Ղարաբաղի հանդեպ նոր ագրեսիայի ճանապարհին: Ողջ մարդկության դեմ իրականացված հանցագործության՝ Հայոց ցեղասպանության կրկնության վտանգը, այն էլ՝ ցեղասպանության 100-ամյակի նախօրեին, խիստ ազդեցիկ **բարոյաքաղաքական լծակ է**, որից հրաժարումը չի կարող փոխհատուցվել Համաշխարհային բանկի կամ այլ կառույցների կողմից առաջարկվող հերթական վարկով, որը, բնականաբար, մսխվելու է՝ հերթական ընտրությունը կեղծելու նպատակով:

Ստեղծված իրավիճակում Հայոց ցեղասպանության դիմաց արդարացի հատուցման պահանջի առաջադրումն ու շաղկապումը՝ հայության դարաբաղյան հատվածի դեմ նյութվող ցեղասպանական ծրագրերը կանխելու առաջադրանքի հետ, ազգային հիմնանպատակից անխուսափելիորեն վերածվելու է **համամարդկային առաջադրանքի**՝ մարդկության ու քաղաքակրթության դեմ նոր ոճիրը կանխելու կամքի ու վճռականության:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդրի առաջադրումով Հայաստանի Հանրապետությունը կարող է մաս ամբողջացնել Լեռնային Ղարաբաղի արդար դատը պաշտպանելու **համահայկական հանձնառության** դաշտը՝ իր շուրջը համախմբելով ողջ աշխարհի հայությանը:

Նույն հիմնախնդիրը **ներպետական իրողությունների** համատեքստում քննելու պարագայում հարկ է վերհիշել, որ հենց Հայոց ցեղասպանության դաժան վերհուշն էր այն հզորագույն ազդակը, որ 1988-ին ոտքի հանեց, իսկ քիչ անց՝ մարտի դաշտ տարավ Ղարաբաղյան պատերազմում հաղթանակած սերնդին: Մխավում են բոլոր նրանք, ովքեր Հայաստանի իշխանությունների կողմից մատակարարվող «բարիքներով» հաճույք ստացող մեր քաղաքացիների մի մասի ժամանակավոր ընդարմացումը գնահատում են իբրև բարքերի աղճատման վկայություն: Հայ ժողովուրդն իր ճնշող մեծամասնությամբ որևէ կապ չունի իրեն պարտադրվող արգահատելի երևույթների հետ, որոնք նրա կամքը կոտրելու նպատակ են հետապնդում: Հայության ազգային իդեալները այսօր էլ ավելի ուժեղ են ու կենսունակ, քան ցեղասպանական նպատակներ հետապնդող հարևանների՝ ռասիզմի ու ատելության վրա հիմնված նկրտումները: Պարզապես՝ դրանց պոռթկալու համար զգացվում է ենթակայական գործոնի հասունացման կարիքը, ինչն ի հայտ է գալիս արտաքին վտանգների առարկայացմանը զուգընթաց: Ուստի կասկած անգամ չպետք է ունենալ, որ առաջիկայում նույնպես հայ ազգը միայն պայքարի ճանապարհով է պաշտպանելու իր շահերը:

Իսկ ահա Հայաստանի իշխանությունները 2015-ին ընդառաջ նախատեսվող ձևական գիտաժողովներով ու ցուցահանդեսներով այլևս չեն կարող խաբել սեփական ժողովրդին և ապացուցել, թե իբր՝ տեր են կանգնում նրա ողբերգական պատմությանն ու անժամանցելի իրավունքներին: Մեծ եղեռնի 100-ամյակի նախապատրաստությունները նմանակումների վերածելու նրանց բոլոր փորձերը դատապարտված են ձախողման:

**Նոր սպառնալիքների առարկայացման պայմաններում ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդրի առաջադրումն է ժողովրդին կրկին համախմբելու և պայքարի առաջնորդելու վճռական պայմանը, որովհետև առաջիկա տարիներին հենց արտաքին վտանգը կանխելու հրամայականն է լինելու ներհայաստանյան քաղաքական դիսկուրսի առանցքային հիմնահարցն ու շարժիչ ուժը:**

Իսկ դա նշանակում է, որ այսօր 2015-ը շրջանցելու անհաջող փորձեր անող Հայաստանի իշխանությունները առաջիկայում չեն կարողանալու շարունակել իրենց ներկա քաղաքականությունը: Ավելին՝ նրանք հարկադրված են լինելու այս կամ այն կերպ ընթացք տալ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման առաջադրանքին՝ գիտակցելով ոչ միայն ազգին ու պետությանը, այլև իրենց իշխանությանը սպառնացող վտանգի մեծությունը: Պատճառն այն է, որ անգամ «գրպանով մտածող» հայաստանյան փողապետության համար ի վերջո

հասու է դառնալու ամենագործության պարադոքսի հայտնի տրամաբանությունը. «**Խնդրեք Աստծուն, որպեսզի նա ստեղծի մի քար, որն ինքը չի կարող բարձրացնել: Եթե ստացվի, նշանակում է նրա ամենագործությունը կորցրել է իր ուժը: Իսկ եթե ոչ՝ ապա նա չի էլ եղել ամենագործ»<sup>5</sup>:**

Այն **քարը**, որը 2015-ին ընդառաջ՝ փակելու է Հայաստանի իշխանությունների ճանապարհը, օրեցօր վտանգավոր դարձող արտաքին միջավայրից բխող սպառնալիքներին դիմակայելու հրամայականն է, որն, ինչպես գիտենք, հայաստանյան փողապետության «արժեհամակարգի» շրջագծում միայն մեկ լուծում ունի՝ **արձանագրային անձնատվությունը**: Բայց քանի որ վտանգը Դարաբաղի վրա կենտրոնանալու պարագայում քարը ստեղծելուց հրաժարվելը սպառնալու է **իշխանության**, իսկ բարձրացնելը՝ **էության** կորստյան վտանգով, ապա նման գլուխկոտրուկը հանգուցալուծվելու է «ճարահատյալ դավանափոխության» տարբերակով: Ուրեմն՝ վտանգված երկրի իշխանությունների համար Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման առաջադրանքը ամենագործության պարադոքսի այն **քարն** է, որը որևէ կերպ հնարավոր չէ շրջանցել: Եվ ներկայումս հայ հասարակայնությանը խաբելու անօգուտ փորձեր անողների **ինքնապահպանման ձգտումը** 2015-ին ընդառաջ՝ անխուսափելիորեն փոխակերպվելու է Մեծ եղեռնի հետևանքների հաղթահարման խնդիրն առաջադրելու և իրենք իրենց բացասելու գործընթացի:

**Մինչև 2015 թվականը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրն առաջ քաշելու հրամայականը նոր ցեղասպանության բացառման, ներազգային համերաշխության վերականգնման և Հայաստանի Հանրապետության ներքին կյանքի առողջացման այն վճռորոշ պայմաններից է, որը չի կարող շրջանցել մեզանում գործող ո՛չ մի ուժ կամ անհատ:** Ելնելով նման հատուկացած առաջադրանքը կյանքի կոչելու նպատակադրումից՝ «Վ.մ» հանդեսը կարևորում է Հայոց ցեղասպանության իրականացման համար Թուրքիային պատասխանատվության կանչելու միջազգային-իրավական գործընթացին անհրաժեշտ՝ փորձագիտական մշակումների հրապարակումն ու քննարկումը: Դրանցից առաջինը մեր աշխատակից Արմեն Յ. Մարությանի ամփոփիչ ուսումնասիրությունն է, որը տեղ է գտել հանդեսի ներկա համարում:

Խմբ.:

## ATTEMPTS AT CIRCUMVENTING 2015

Editorial

5 Savage, C. Wade. The Paradox of the Stone, "Philosophical Review", Vol. 76, N 1 (Jan. 1967), pp. 74-79.